



ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՅԱՎԱԿՅԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՅ ՄԵՇ ՆԿԱՐԻՉ ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՎՇՏԱՀԱՐ ՏԻԿԻՆ ԼՈՒՍԻԿ ՍԱՐԵԱՆԻՆ
ԵՒ ՍԳԱԿԻՐ ԸՆՏԱՆԻՔԻՆ, Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱԽՈՐԶԻ
ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ

ԵՐԵՒԱՆ

Հայկական և կարչական արուեստի մեծանուն Վարպետը, Մարտիրոս Սարեանը, իր լոյս աչքերը փակեց ու խաղաղութեամբ անցաւ միւս ափը կեանքին, յաւիտ ապրելու համար:

Սուրբ Էջմիածնի սեղանի առաջ ծնկաչոք Մենք աղօթում ենք նրա հոգու համար և հաւատում ենք նրա անմահութեան:

Փայլուն շնորհներով օժտուած Վարպետ Մարտիրոսը, ստեղծարար աշխատանքի ճանապարհով որոնեց ու հասաւ իր հարազատ ժողովրդի կեանքի ու հոգու ամենախոր ակունքները և դարձաւ նրանց վաւերական ու ինքնատիպ արտայայտիչը իր արուեստի գործերով, իր մտածումի ու զգացմունքի խոյանքներով և իր ժայռակերտ հայրենասիրութեամբ:

Այսօր բոլորս, թէև սգաւոր, սակայն անհունօրէն մխիթարուած ենք որ Սարեանը ծնունդ մեր ժողովրդի ծոցում, և մեր «փոքր ածուն», նրա գործով ու համբաւով մի անգամ ևս բարձրացաւ համամարդկային արժէքների կայարան:

Մխիթարուած ենք մաւն այն գիտակցութեամբ թէ անմահացած Վարպետը, յետ այսու առանել հզօրութեամբ պիտի շարունակէ բոցավառել սրտերը մեր մօր սերունդներին, իր ոգու հրդեհով: Այն ոգու, որով մա տենչում էր երկընքի արևները իջեցնել վերածնունդ Հայոց աշխարհ ու իր պաշտելի ժողովրդին բաշխել՝ աւելի լոյս, աւելի միասնական ինքնագիտակցութիւն ու աւելի արդար ապագայ:

Մեր օրերի և գալիք ժամանակների համար Մարտիրոս Սարեանը միշտ պիտի մնայ, իբրև մարդ՝ սուրբ յիշատակ, իբրև արուեստագէտ՝ յաղթական մի կրամար հայ ոգեկանութեան, իբրև Հայաստանի քաղաքացի՝ անլուելի պատգամ:

Օրհնութիւն մրա հոգուն, մրա գործին, մրա երազանքներին:

Օրհնութիւն մաւն ձեզ, տիկին Լուսիկ, և ձեր բոլոր հարազատներին, հոգւոյ մխիթարութեամբ ու խաղաղութեամբ: Ամէն:

Տուա կոնդակս ի 10-ը մայիսի
1972 փրկչական ամի,
և ի տունարիս հայոց ՌԵԻԱ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 732

Կարպէ Բ

ԾԱՅՐԱԳՈՏՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱՌՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՏՆ ՀԱՅՈՑ

